ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ՝ «ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԻՆ

# ՋԱՐՄԱՆԱԼԻՈՐԵՆ ՊԱՐԶ ԵՎ ԲԱՐԴ ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

*...Երեւի այդպես էլ վարվեինք նաեւ այս անգամ, եթե չլինեին Վրաստանի ու Հայաստանի նախագահներ Սալոմե Զուրաբիշվիլու եւ Արմեն Սարգսյանի, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի՝ Վան Բայբուրթյանին ուղղված շնորհավորանքներն ու բարեմաղթանքները, որոնք համեստորեն փորձում էր թաքցնել: Բայց անցած կիրակի, Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում՝ Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնական պատարագի ավարտին, Վան Բայբուրթյանի ներկայությամբ հանրայնացվեց եւ ընթերցվեց Վեհափառ Հայրապետի շնորհավորական ուղերձը: Այս ամենը թերթում լուսաբանելու պատեհ առիթին միացավ նպաստավոր մյուսը՝ թերթի լույսընծայման օրը մեր խմբագրի հազվադեպ բացակայությունը: Ու մենք անհապաղ որոշեցինք օգտվել ընձեռված հարավորությունից...*

*Սիրելի Վան Վաղարշակի, որոշեցինք եւս մեկ անգամ համարձակ խախտել հոբելյանը հրապարակավ չշնորհավորելու «բայբուրթյանական ավանդույթը»: Այո, եւս մեկ անգամ, որովհետեւ, եթե թերթենք մեր «Վրաստանը» ու գանք 2000 թվականի կրկին հուլիս (15 հուլիսի, 2000 թ., №57-58), ապա կհանդիպենք խմբագրության անունից, թեեւ իրականում՝ Անահիտ Բոստանջյանի անզուգական ձեռագրով ու ստորեւ կրկին ներկայացվող մի հրաշալի շնորհավորանք-ակնարկի՝ Ձեզ ու Ձեր մասին... Որոշել ենք վերահրապարակել հենց այդ նյութը եւ ոչ միայն Ձեր կերպարը կերտող բացառիկ արժեքով, այլեւ այն ճշմարիտ փաստարկով պայմանավորված, որ այն օրերից առայսօր Ձեր բնութագրականում ոչինչ չի փոխվել, նույնն է ամեն ինչ ու թե ավելացել է, ապա միայն վրաց-հայկականում ներդրած ու խրախուսած Ձեր ճիշտ ու խոհեմ քայլերի թիվը...*

*Շնորհավոր, Վան Վաղարշակի ջան, Վրաստանից ու «Վրաստանից» անպակաս....*

Ով անձամբ ճանաչում է նրան, կասի, որ հանապազ վառվում է ինչպես լեգենդային մորենին, վառվում է, բայց չի մոխրանում, բոցկլտում է անընդհատ, բայց անկիզելի է, անսպառ...

Այսպիսին է նա այսօր, երբ խմբագիրն է «Վրաստան» հանրապետական թերթի, պատգամավորը Վրաստանի խորհրդարանի, Վրաստանի հայերի միության փոխնախագահը: Ասում են, այսպիսին էր եւ տարիներ առաջ, երբ աշակերտ էր Թբիլիսիի թիվ 40 հայկական միջնակարգ դպրոցում: Այսպիսին էր եւ Մոսկվայի ու Թբիլիսիի պետական համալսարանների ժուռնալիստիկայի ֆակուլտետներում ուսանելու տարիներին: Այսպիսին էր եւ լրագրողական գործունեության իր նախնական շրջանում Թբիլիսիում լույս տեսնող «Մոլոդյոժ Գրուզիի», ապա համալսարանն ավարտելուց հետո՝ «Սովետսկի սպորտ», «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթերի եւ ԱՊՆ-ի գործակալության սեփական թղթակից եղած տարիներին:

Եվ ահա, երբ բնության օրինաչափությամբ թռել-անցել, քառատրոփ ձիերի նման սլացել են տարիները, որքան էլ զարմանալի ու անհավատալի, Վան Բայբուրթյանն այսօր աշխարհին ու մարդկանց է նայում 60 երկար ու ձիգ տարիների բարձունքից: Բայց կտա՞ն նրան 60... «Ժամանակը թվում է, չի ազդել նրա վրա ոչ արտաքնապես. ոչ էլ ներքնապես. զի էությունն է մնացել նույնը, միշտ անհանգիստ, միշտ պրպտուն ու որոնող, ինչպես ասում են՝ «հոլի պես պտտվող» եւ կենսասե՜ր, կենսասե՜ր... Երեւի այս վերջինն էլ հենց առավելագույնս է ընդգծում նրա երիտասարդական եռանդը: Համենայնդեպս, Վան Բայբուրթյան-հանրաճանաչ հայորդուն գրեթե բոլորն են իբրեւ այդպիսին ճանաչում: Հավանաբար սխալված չենք լինի, եթե ասենք, որ ավելի լավ ու ավելի մոտիկից ճանաչում ենք մենք՝ «Վրաստանի» աշխատակիցներս: Ու չնայած գիտենք, որ նա ավելորդ ճոռոմաբանությունից հեռու արհեստավարժ լրագրող է եւ հեռու է ցուցամոլությունից ու ինքնագովազդից, բայցեւայնպես իր 60-ամյա հոբելյանի նախօրեին մի քանի անգամ զգուշությամբ ակնարկեցինք, այսպես ասած, «հոբելյանական հարցազրույց» անցկացնել իր հետ: Նա կտրականապես մերժեց, հիմա հոբելյանների ժամանա՞կ է, մարդիկ ամիսներով աշխատավարձ ու թոշակ չեն ստանում, հոբելյա՞ն նշել... Ասենք նաեւ, որ համատեղ աշխատանքի տարիների ընթացքում մենք վաղուց հաշտվել ենք նրա այդ տարօրինակ ավանդույթին, երբ ծննդյան օրից մի քանի օր շուտ եւ մի քանի օր ուշ, նա բացակայում է քաղաքից, գրկելով ոչ միայն իր գործընկերներին, այլեւ մտերիմներին՝ իրեն շնորհավորելու հաճույքից:

Չդավաճանեց մեր խմբագիրն իր այս ավանդույթին եւ իր կլոր տարեդարձի կապակցությամբ: Այս անգամ իր ծննդյան օրը Բայբուրթյանը Սանկտ Պետերբուրգում է, որտեղ, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հրավերով, մասնակցում է Սուրբ Եկատերինայի հայոց եկեղեցու վերաբացման հինգօրյա արարողություններին:



Վան Բայբուրթյան, 2000թ.

Երեւի մենք չխախտեինք մեր խմբագրի արգելքը՝ չարձագանքեինք նրա հոբելյանին, բայց հենց հուլիսի 11-ին՝ նրա ծննդյան օրը, կայացավ Վրաստանի խորհրդարանի արտահերթ նիստ, որտեղ խորհրդարանի նախագահ Զուրաբ Ժվանիան, ի լուր ողջ Վրաստանի, հեռակա կարգով շնորհավորեց նրա 60-ամյակը՝ մաղթելով նրան քաջառողջություն եւ բազմաթիվ հաջողություններ՝ անձնական եւ հասարակական կյանքում:

Ահա այդ «գաղտնիքը» բացելուց հետո որոշեցինք ավելի համարձակորեն չենթարկվել մեր խմբագրի ցանկությանը եւ թեեւ ոչ հարցազրույցի ձեւով, իբրեւ մեր սրտի շնորհավորական ուղերձ առ Բայբուրթյանը, ընթերցողին ներկայացնել նրա դիմանկարի ուրվագծերը:

Երեւի կրկին անգամ ընդգծենք, որ մեր մտապատկերում դժվարանում ենք համատեղել Վան Բայբուրթյան եւ 60 միաձուլվածքը: Ասում են մարդու տարիքը մատնում են նրա աչքերը, բայց փորձիր սուզվել նրա աչքերի խորքն անգամ եւ 60-ի հյուլե էլ չես գտնի այնտեղ: Իսկ առույգ շարժո՞ւձեւը, իսկ անընդհատ շարժման մեջ լինե՞լը, իսկ տրտմությո՞ւնն ու հումո՞րը: Պարզապես նրա արած գործերն են շատ, պարզապես նրա ազգանվեր-հայրենանվեր գործունեությունն է շռայլ, աշխատանքային կենսագրությունն է հարուստ ու բովանդակալից, որ 60-ից պակաս տարիքում դժվար թե «տեղավորվեր»: Ահա թե սոսկ ինչն է մատնում նրան:

Ընդգծված անհատականություն է Վան Բայբուրթյանը՝ զարմանալիորեն պարզ եւ զարմանալիորեն բարդ: Ուրիշների պես նա էլ ունի իր մակընթացություններն ու տեղատվությունները, իր պոռթկումներն ու մարումները: Շատերը երեւի գիտեն, որ Վան Բայբուրթյանը երբեմն մանկորեն դյուրահավատ է ու անհիշաչար: Նրա հոգում երբեք չի նստում չարության ժանգը, առավել եւս երբ բավականին հազվադեպ է պոռթկում: Դրա համար էլ նա կարողանում է, ինչպես ասում են, «յոլա գնալ» ամենակոնֆլիկտային մարդկանց հետ անգամ: Սա Վան Բայբուրթյանի մեծագույն արժանիքներից մեկն է երեւի, նրա բնավորության հաղթաթուղթը, որով նա շատ-շատերից է տարբերվում, իսկ հաճախ նաեւ անըմբռնելի թվում շրջապատի համար: Կարեւորն այն է, որ նա շատ մարդամոտ անձնավորություն է, դիմացինի նկատմամբ հովատար եւ ծայրաստիճան բարյացակամ: Հենց թեկուզ առանձնասենյակում նստած խմբագրական նյութերի, հրապարակախոսական այլեւայլ հոդվածների, ելույթների, վրա-վրա հեռախոսազանգերի, բազմաթիվ կարեւոր ու անկարեւոր գործերի արանքում անգամ նա կարողանում է այնպես անել, որ իր մոտ տիրապետում է բարյացակամության մթնոլորտը: Նա շատ հետաքրքիր, այսպես ասած, համով-հոտով զրուցակից է: Դա երեւի գալիս է նրանից, որ ե'ւ մեծ հմտության տեր մարդ է, ե'ւ ազատ է գիտելիքների բնագավառում: Հատկապես ինքնատիպ ու սուր են նրա դատողությունները: Մտածելակերպն է այդպիսին, մտքի թռիչքն է բարձր: Ճակատի կնճիռներն էլ երեւի մտքի կայծակներն են: Նրա հետ զրուցելիս զգում ես նրա բուռն, անհագուրդ հետաքրքրությունը շրջապատի երեւույթների, քաղաքական իրադարձությունների նկատմամբ, իսկ քաղաքականությունը լրագրության հետ խոր ներդաշնակությամբ, իսկապես Վան Բայբուրթյանի տարերքն են կազմում (ի դեպ, ներդաշնակություն նա ամեն ինչում է սիրում): Երեւի քաղաքական ասպարեզ նետվելը դեռեւս տարիներ առաջ էլ պայմանավորված էր հենց լրագրողի՝ նրա անհագուրդ հետաքրքրասիրությամբ եւ ինչ խոսք, ժողովրդասիրությամբ, հայրենասիրությամբ, անսահման սիրով դեպի իր ծննդավայրը, իր երկիրը՝ Վրաստանը, ուրեմն եւ անսահման սիրով դեպի Հայաստանը: Նա սիրում է կրկնել «Վիրահայության նպատակն է ամրապնդել հայ-վրացական դարավոր բարեկամությունը, Վրաստան-Հայաստան համագործակցությունը: Յուրաքանչյուրս պետք է ամեն ինչ անենք, որպեսզի Մայր Հայրենիքը մեր պատճառով ոչ մի հիմնախնդիր չունենա»:

Մեր անհանգիստ ժամանակաշրջանում ոչ ոք չունի անվտանգության եւ անպարտելիության երաշխիք: Եվ Վան Բայբուրթյանը պարտություններ էլ քիչ չի տարել կյանքում, տմարդիների հարվածներ կրել: Խմբագրությունը լավ է հիշում 90-ական թվականների սկիզբը, երբ նրա առանձնասենյակ ներխուժեցին ավտոմատավորները՝ «աթոռը» հանձնելու համար իրենց ընտրյալին... Ինչպես միշտ, այս անգամ Վան Բայբուրթյանին օգնեցին նրա զգոն ու սթափ խառնվածքը, աշխատակիցների սերը իր հանդեպ: Շատերն են սիրում Վան Բայբուրթյանին եւ բավականին լայն է նրա շրջապատը խմբագրություն, վիրահայ համայնք, Վրաստանի պետական գրասենյակ ու խորհրդարան, Վրաստանի ու Հայաստանի լրատվական միջոցներ, մշակույթի ու լուսավորության վրացի ու հայ գործիչներ, տարբեր բնագավառներում աշխատող եւ տարբեր ազգության ընկեր-բարեկամներ: Եվ այս բազմածանոթությունը, այս բազմընկերությունը նրա տարերքն է, քանզի նա, իրոք, հաճախ է սիրում դուրս գալ մարդու՝ իր աշխարհի սահմաններից եւ խաչմերուկվել մյուս աշխարհների հետ: Դա էլ հենց օգնում է նրան հարստացնելու կենսափորձը եւ միշտ կանգնած մնալու վերելքի ճանապարհին:

Վան Բայբուրթյանը նպատակասլաց անձնավորություն է, նա միշտ որոնում է եւ գրեթե միշտ կարողանում է գտնել: Երեւի լրագրողի մասնագիտությունն է նրան այսպիսին դարձրել: Այո, նա լրագրող է էությամբ, խառնվածքով, հոգեկան կերտվածքով, ինչպես հները կասեին՝ Աստծո օրհնությամբ: Հասարակական ինչ աշխատանքի էլ ձեռնամուխ է լինում Վան Բայբուրթյանը, նա դրա մեջ տեսնում է այն կարեւորն ու էականը, ինչքանով այն արդիական լինելով հանդերձ, արժեքավորվելու է նաեւ վաղը: Ժամանակի թելադրանքով անհրաժեշտաբար, հոգու ողջ նվիրումով ու ապագայի հանդեպ հավատով էր, որ նա իր շուրջը հա-

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ԳՆԱՀԱՏՈՒՄ

# ԿԻԵՎՈՒՄ ՓԱՐԱՋԱՆՈՎԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇ-ԵՐԵԿՈ Է ԱՆՑԿԱՑՎԵԼ, ԻՍԿ ԹԲԻԼԻՍԻՈ՞ՒՄ

*Ուկրաինայի մայրաքաղաք Կիեւում հնագույն Սուրբ Սոֆիայի տաճար-թանգարանում համաշխարհային կինոյի մեծ վարպետ, աշխարհահռչակ բեմադրիչ, նկարիչ, դիզայներ Սերգեյ Փարաջանովի մահվան 30-րդ տարելիցին նվիրված հուշ-երեկո է անցկացվել:*



Հիշատակի հուշ-երեկոն կազմակերպել էր «ԱՕԿՍ-Ուկրաինա» հայկական մշակութային կապերի ընկերությունը՝ «Կիեւյան Սոֆիա» ազգային հատուկ պահպանվող տարածքի եւ Ուկրաինայում ՀՀ դեսպանության աջակցությամբ:

Ներկաներին ողջույնի խոսքեր են հղել «Կիեւյան Սոֆիայի» գլխավոր տնօրեն Նելյա Կուկովալսկայան եւ Ուկրաինայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Տիգրան Սեյրանյանը:

Ողջ երեկոյի ընթացքում իրենց հիշողություններն ու մեծ Մաեստրոյից իրենց տպավորությունններից են խոսել եւ կիսվել իր ընկերները, ուսանողներն ու բարեկամները եւ պարզապես մարդիկ, ովքեր երջանկություն են ունեցել շփվելու հռչակավոր ռեժիսորի հետ:

Սերգեյ Փարաջանովի հիշատակին նվիրված միջոցառման ավարտին ներկաները դիտել են ռեժիսոր Ռոման Բալայանի «Գիշերը Փարաջանովի թանգարանում» ֆիլմը:

Ցավոք, Թբիլիսիում, որտեղ ծնվել, մեծացել ու ստեղծագործել է մեծ արվեստագետը, այդ տխուր տարելիցը ոչ ոք չի հիշել...

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ՝ «ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԻՆ

# ՀԱՐՄԱՆԱԼԻՈՐԵՆ ՊԱՐԶ ԵՎ ԲԱՐՁ ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(Սկիզբը՝ 5-րդ էջում)

ռախմբելով վիրահայ մշակույթի գործիչներին ու մտավորականներին, վիրահայության մարդկային ու ազգային արժանապատվությունը վերահիմնաստավորելու գերագույն նպատակով 90-ական թվականներին մղվեց դեպի Վրաստանի մշակութային բարեգործական ընկերություն ստեղծելու գաղափարը: Իսկ այդ ընկերության համագումարում միաձայն ընտրվեց դրա առաջին նախագահ:

Այո, Վան Բայբուրթյանը Վրաստանում հանրաճանաչ դեմք է: Նա այն քաջահամբավ հասարակական գործիչներից է, որոնք հուսալի եւ զգայուն ուղեցուցորդներ են եղել իրենց ժողովրդի ու երկրի պատմության քառուղիներում: Նրա գիտակցական ողջ գործունեությունն ուղղված է իր երկրի բարգավաճման, իր երկիրը ճգնաժամից դուրս բերելու դժվարին գործին: Նա լավ է ըմբռնում, որ Վրաստանում հայերը լիիրավ քաղաքացիներ են եւ եթե կան հիմնախնդիրներ, ապա դրանց լուծման համար առաջնայինն այն է, որ մենք ձերբազատվենք բարդույթներից: Նա համոզված է, որ երկրի բարօրության համար ինչպես հազարամյակներ առաջ, այնպես էլ՝ այսօր, ամենակարեւոր գրավականներից մեկը դա հայի ու վրացու սրտերի փոխադարձ կանչով ստեղծված բարեկամությունն է, իսկ սա կյանքում հաստատված այն արժեքներից է, որոնք անհնար է անտեսել: Այն բռնել է հազարամյակների ու բազում փորձությունների քննությունը ու երբեք կնիքի կարիք չի զգում: Վան Բայբուրթյանը մեկն է այն երախտավորներից, որն, այո, կմնա պատմության մեջ իբրեւ այդ բարեկամության աշտարակն ամուր պահող հենասյուներից մեկը: Իբրեւ մեր ժողովուրդների բարեկամության մոլի ջատագով, նա բազմաթիվ անգամներ է հանդես եկել Վրաստանի ու Հայաստանի հեռուստատեսությամբ, պարբերականներում, մեր եւ բազմաթիվ այլ վրացատառ, հայատառ ու ռուսատառ թերթերում: Հրապարակախոսական խոր շնչով, խոր այժմեականությամբ, վրաց եւ իր հարազատ հայ ժողովրդի հանդեպ խոր սիրով է հնչում նաեւ նրա ձայնը «Ամերիկայի ձայն» եւ «Ազատություն» ռադիոկայաններից: Բայբուրթյանը համոզված է, որ կանցնեն ժամանակներ, կփոխվեն պետական գործիչներն ու ղեկավարները՝ իրենց ճիշտ ու սխալ քարոզչություններով, բայց այս բարեկամությունը կմնա որպես իրար կողքի վառվող մոմեր, որոնք լուսավորում են շրջապատը եւ իրենց:

Վան Բայբուրթյանն իսկական հայորդի է, եւ քաղաքացիական այն կիրքը, որով այրվում է նա, ինքնայրումի այն հրդեհը, որը մշտապես բռնկված է նրա մեջ, առաջին հերթին ուղղված է իր ազգի բարօրությանը: Հիշենք, թե որքան ազգանվեր գործերի գլուխ է կանգնել Վան Բայբուրթյանը: Նրա անմիջական ջանքերի շնորհիվ չէ՞ր արդյոք, որ սկսեց գործել Թբիլիսիի թիվ 131 դպրոցի հայկական մասնաճյուղը, չդադարեցին գործել թիվ 21, թիվ 93, թիվ 95 հայկական դպրոցները...

Պարադոքս է, բայց փաստ, որ ցավոք, այսուամենայնիվ, կան այնպիսիները, որոնք փորձում են աղճատել նրա դիմանկարը, փորձելով նրան ներկայացնել՝ որոշ վրացիներ որպես հայամետ, որոշ հայեր էլ որպես վրացամետ գործիչ: Ինչ անի այս դեպքում Վան Բայբուրթյանը, որի՞ն ի՞նչ բացատրի: Այո, նա սիրում է Վրաստանը: Վրաստանն իր բոլոր տագնապներով ու ամբողջ հիասքանչությամբ նրա էության մեջ է, քանզի դա իր ծննդավայրն է, իր ծնողների օրրանը, իր պապերի գերեզմանը: Հայ է իր Հայաստանով ու իր հայ մշակույթով: Ու քանի որ իր մշակույթը այստեղ՝ այս հիասքանչ վրացական հողում էլ է ծաղկել ու ծաղկում, ապա նա անկարող է չսիրել վրացուն ու Վրաստանը, անկարող է չզինվորագրվել Վրաստանի բարգավաճման համար մղվող պայքարին: Եվ Վրաստանի խորհրդարանում հաճախ հնչող նրա ելույթները գերազանցապես այս միտքն էլ են արծարծում:

Վան Բայբուրթյանը այն երջանիկներից մեկն է, որը տոն եւ ուղղություն է տալիս ամբողջ համայնքի կյանքին: Նա ձգտում է պատմության մեջ թողնել ընդօրինակության արժանի, արժեքավոր էջեր, միեւնույն ժամանակ, Բայբուրթյանն ավանդապաշտ է: Ներկայի հետ միասին նա անցյալն է տեսնում, անցյալով՝ գալիքը: Եվ վաղվա օրն ուզում է տեսնել՝ իմացության ծարավը հագեցնելու համար: Մի առիթով, թե ինչո՞ւ է այդքան մղվում դեպի անցյալը, նա ասաց, որ ինչ անհաղթահարելի ուժով մղվում է դեպի ապագա, նույն ուժով էլ ձգվում է դեպի անցյալ՝ ձեռք բերելու անցած պատմական ռեալականությունը եւ վերապրելու այն ժամանակները, երբ ինքը չկար:

Հիմա Վան Բայբուրթյանը աներեւակայելիորեն գերզբաղ է: Սակայն, այս գերզբաղվածությունը չի խանգարում նրան մնալու նույն սատարիչը, նույն հոգատար, նույն բարյացակամ անձնավորությունը՝ թե' համայնքում, թե' խմբագրությունում, թե' ընկեր-բարեկամների ու հարազատների շրջապատում: Եվ այս բոլոր հարցերում նրան օգնում են՝ ճկուն ուղեղը, եռանդը, բարձր ինտելեկտը, կուլտուրական բարձր մակարդակը, հումորի սուր զգացողությունը:

Թերեւս Վան Բայբուրթյանի դիմանկարը թերի լինի, եթե չասենք, որ նա ընտանիքի լավ ամուսին է, լավ հայր:



Վան Բայբուրթյան, 2020թ.

Վան Բայբուրթյանի աշխատանքային, քաղաքական, հասարակական անուրանալի վաստակը բարձր է գնահատվել իշխանությունների կողմից: Նա պարգեւատրվել է Պատվո շքանշանով:

Վան Բայբուրթյանն այսօր թեւակոխում է իր երկրորդ երիտասարդությունը, եւ մենք համոզված ենք, որ 100 տարեկան էլ դառնա, նա դարձյալ մնալու է նույն Վան Վաղարշակովիչը՝ աշխույժ, կայտառ, միշտ ազգային գործերով հոգսաբեռ... Համոզված ենք, քանզի նա մասնիկն է մի ժողովրդի, որը երբեք չգիտի ընկճվել, որը միշտ առույգ է ու անսասան: Եվ այն կենսասիրությունը, որն այս տարիքում էլ ընդգծում է նրա երիտասարդական եռանդը, թող այսուհետ եւս ուղեկցի նրան: Արդ, մաղթենք նրան ծով, լուսառատ երջանկություն, ասել է թե՝ քաջառողջություն եւ հաջողություններ՝ ի փառս մեր ժողովրդի, մեր Վրաստանի եւ մեր պատմական Հայրենիքի:






ԿՐԹԱԿԱՆ

## ԵՐԲ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԻՆՉ ՁԵՎՈՎ ԿՏՐՎԻ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԵԿՆԱՐԿԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

*Նոր ուսումնական տարվա մեկնարկի շուրջ վերջերս հայտարարություն էր արել Վրաստանի առողջապահության նախարարի տեղակալ Թամար Գաբունիան. «Մտածում ենք խառը մոդելի շուրջ, որը նկատի ունի որոշակի առումով առցանց եւ նաեւ՝ դասարանային ուսուցում: Այս երկու մեթոդների հավասարակշռված կիրառմամբ՝ հնարավոր կլինի դպրոցական գործընթացն անվտանգ սկսել եւ շարունակել»:*

Թեմայի շուրջ Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի փոխնախարար Էկատերինե Դգեբուաձեն օրերս տեղեկացրեց, որ, ելնելով այսօրվա իրավիճակից, նոր ուսումնական տարին կսկսվի սեպտեմբերի 15-ին, դասասենյակներում: Նրա խոսքով՝ նախարարությունը մշտապես խորհրդակցում է առողջապահության նախարարության եւ հիվանդությունների վերահսկման ու հանրային առողջության ազգային կենտրոնի հետ, այդ թվում նաեւ՝ ուսումնական գործընթացը սկսելու ձեւաչափի շուրջ: Անպայման հաշվի կառնվեն նրանց կողմից տրված բոլոր հանձնարարականները, քանի որ, ի վերջո, ամեն ինչ կապված է այդ ժամանակի համար գոյություն ունեցող համաճարակային իրավիճակից:

- Մեր հիմնական նպատակն է՝ պահպանել յուրաքանչյուր աշակերտի առողջության անվտանգությունը եւ ապահովել լիարժեք կրթական միջավայր,- նշեց փոխնախարարը:

## ԵՐԲ ԿՍԿՍՎԻ ՈՒ ԿԱՎԱՐՏՎԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՓՈՒԼԸ

Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության պաշտոնական հաղորդագրությամբ, երկրում հայտարարված արտակարգ դրությամբ պայմանավորված կորոնավիրուսային համաճարակի տարածումը կանխելու նպատակով, փոփոխություններ են մտցվել 2020-2021 ուսումնական տարվա առաջին դասարանցիների գրանցման ժամկետներում՝ հաշվի առնելով առաջին դասարանցիների եւ նրանց ծնողների շահերը: Չորրորդ փուլի գրանցումն ու փաստաթղթերի ներկայացնելը կսկսվի օգոստոսի 20-ից եւ կավարտվի սեպտեմբերի 10-ը ներառյալ:

Չորրորդ փուլում թափուր/ազատված տեղերում կամ ազատ մնացած տեղերում կգրանցվեն այն երեխաները, որոնք I, II եւ III փուլերում չեն կարողացել գրանցվել կամ ցանկանում են փոխել գրանցման տեղը:

Ուշադրություն. արտակարգ դրության պայմաններում դպրոցները հաստատում են գործավարության նոր ընթացակարգ, որը հնարավորություն է տալիս ծնողներին/օրինական ներկայացուցիչներին էլեկտրոնային եղանակով ուղարկել դիմումները՝ համապատասխան փաստաթղթերի հետ միասին կամ դպրոցի կողմից հաստատված կարգի համաձայն՝ անվտանգության կանոնների պահպանմամբ, փաստաթղթերը փոխանցել հաստատության տնօրինությանը: Դպրոցը 2 օրում ծնողի/օրինական ներկայացուցչի էլեկտրոնային փոստում պետք է հաստատի դիմումի եւ փաստաթղթերի ընդունումը:

Հավելենք, որ Վրաստանի օրենսդրությամբ առաջին դասարան կարող են գրանցվել այն երեխաները, որոնց 6 տարին լրացել կամ լրանում է մինչեւ սեպտեմբերի 15-ը ներառյալ:

*Պատրաստեց ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ*
*Վրաստանի կրթության նախարարության աշխատակից*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՀՈՒԼԻՍՅԱՆ ՄԱՐՏԵՐԻՑ ՀԵՏՈ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՄՐԱՊՆԴՎԵԼ Է

*Հուլիսի 23-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը կառավարության նիստում հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում Հայաստանի դիրքորոշումը հուլիսյան հաղթական մարտերից հետո ամրապնդվել է:*



Նիկոլ Փաշինյանը այն ներկայացրեց յոթ կետերով.

- **Առաջին.** Հայաստանի եւ Արցախի ընդհանուր անվտանգության համակարգը պետք է առավել ամրապնդել:

**Երկրորդ.** Արցախի Հանրապետությունը պետք է դառնա բանակցությունների լիարժեք կողմ:

**Երրորդ.** Ադրբեջանը պետք է հրապարակայնորեն հրաժարվի ուժի կիրառումից եւ վստահելի քայլեր կատարի հակահայկական հռետորաբանությունը դադարեցնելու ուղղությամբ:

**Չորրորդ.** Բանակցությունները պետք է լինեն իմաստալից: Բանակցություններն իմաստ ունեն, եթե Ադրբեջանը պատրաստ է ետ կանգնել իր մաքսիմալիստական մոտեցումից եւ պատրաստ է փոխզիջման:

**Հինգերորդ.** Արբեջանին զենք մատակարարող երկրները պետք է հստակ գիտակցեն, որ այդ զենքի օգտագործումը խաղաղ բնակչության դեմ միջազգային հանցագործություն է, քանի որ այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ Հայաստանի զինված ուժերի եւ խաղաղ բնակչության դեմ կռվում է ոչ թե Ադրբեջանը, այլ օտարերկրյա գերճշգրիտ մահաբեր զինատեսակներ արտադրող միջազգային կորպորացիաները՝ իրենց մասնագետներով հանդերձ:

**Վեցերորդ.** Հրադադարի պահպանման մոնիթորինգը, որը գոյություն ուներ մինչեւ համավարակը, փաստացի խիստ սահմանափակ է: Անհրաժեշտ է ներդնել արդյունավետ միջազգային մոնիթորինգ, որը լինի մշտական եւ ունենա ստուգողական մեխանիզմներ, որոնք կարձանագրեն, թե երբ եւ որ կողմն է խախտել հրադադարը:

**Յոթերորդ.** Հակամարտության խաղաղ կարգավորման նպատակով Հայաստանը շարունակելու է աշխատել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ: Մենք վճռականորեն մերժել եւ մերժելու ենք հակամարտության շահարկմամբ տարածաշրջանը ապակայունացնելու Թուրքիայի փորձերը,- նշեց վարչապետը:

Նիկոլ Փաշինյանի խոսքով՝ չենք կարող անտեսել այն, ինչ տեղի է ունեցել:

- Չենք կարող անտեսել այն փաստը, որ 2016 թ. ապրիլից հետո երկրորդ անգամ Ադրբեջանն ուժ կիրառեց այն դեպքում, երբ առկա էր խաղաղ գործընթաց, երբ առկա էր ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կոչը՝ ձեռնպահ մնալ սադրիչ գործողություններից եւ հռետորաբանությունից: Ադրբեջանն ուժ կիրառեց այն պահին, երբ ողջ աշխարհն իր ուժերն ու ռեսուրսները կենտրոնացնում է մարդկությանը պատուհասած համաշխարհային համավարակի դեմ պայքարում,- ասաց վարչապետը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ



*Հուլիսի 20-ին, Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանն այցելեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ հանդիպում ունեցավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ:*

Հանդիպմանը Հայաստանի նախագահը եւ Վեհափառ Հայրապետն անդրադարձան վերջին օրերին հայ-ադրբեջանական սահմանի Տավուշի հատվածում Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողություններին եւ ադրբեջանական զինուժի կողմից խաղաղ բնակավայրերի հրետակոծմանը:

Նախագահն ու Վեհափառ Հայրապետը խոսեցին նաեւ ազգային-եկեղեցական կյանքի կարեւորագույն խնդիրների, հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման մասին:

Արմեն Սարգսյանը շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ կորոնավիրուսի համավարակի պայմաններում Հայ Առաքելական եկեղեցու կողմից իրականացվող աջակցության ծրագրերի համար:

## 25 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ՝ ՀՐԵՏԱԿՈԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

*Հուլիսի 24-ին, Հայաստանի կառավարության նիստում, որը վարում էր վարչապետ Նիկոլ Փաշինյանը, որոշվեց փոխհատուցում տրամադրել հրետակոծությունից տուժած Տավուշի բնակիչներին:*

Հաշվի առնելով հայ-ադրբեջանական սահմանի վերջին օրերին տիրող լարված դրությունը եւ Հայաստանի Տավուշի մարզի սահմանամերձ համայնքներում հրետակոծությունից տուժած բնակիչների կրած վնասները, կառավարությունն ընդունել է որոշում՝ որով 25 մլն դրամ կհատկացվի մարզպետարանին: Հիմնավորման համաձայն՝ հուլիսի 12-ից սկսված հրետակոծությունների հետեւանքով տուժած ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ համայնքների բնակիչներին վնասված անշարժ գույքի փոխհատուցման համար նախնական գնահատականով անհրաժեշտ կլինի առնվազն 150 մլն դրամ, որից 25 մլն դրամը առաջարկվում է հատկացնել հրատապության կարգով: Ստեղծվել է գույքագրման եւ գնահատման աշխատանքային խումբ, որն աշխատում է բնակավայրերում: Աշխատանքներին կներգրավվեն տեղի շինարարական կազմակերպությունները, ինչպես նաեւ՝ արտագնա աշխատանքի չմեկնած քաղաքացիները: Գումարի մի մասը կհատկացվի կանխավճարով՝ աշխատանքները շուտափույթ սկսելու համար:

### 192 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ՝ «ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ»

***«Զինծառայողների աջակցության հիմնադրամին» հուլիսի 17-22-ը 48 երկրից կատարվել է շուրջ 192 մլն դրամի նվիրատվություն:***

***Հիմնադրամի Ֆեյսբուքի էջն էլ հայտնում է, որ գումարի 27%-ը փոխանցվել է կայքի միջոցով, 12%-ը՝ Paypal-ի միջոցով, 61%-ը՝ բանկային փոխանցման միջոցով:***

***Կատարվել է ավելի քան 2500 նվիրաբերություն:***

### ԾՈՒԾԱԴՐՎԵԾԻՆ ԽՈՑՎԱԾ ԱՆՕԴԱՉՈՒ ՍԱՐՔԵՐԸ

***Հայաստանի պաշտպանության նախարարության մարշալ Արմենակ Խանփերյանցի անվան ռազմաավիացիոն համալսարանում ցուցադրվեցին վերջին օրերին հայ-ադրբեջանական սահմանին Հայաստանի զինված ուժերի խոցած ադրբեջանական անօդաչու թռչող սարքերը:***

***Ցուցադրմանը նշվեց, որ հայ-ադրբեջանական սահմանին Հայաստանի զինված ուժերը խոցել են ադրբեջանական 10 միավոր հարվածային, 1 ռազմավարական եւ 3 հետախուզական նշանակության անօդաչու թռչող սարքեր:***

***Հայաստանի պաշտպանության նախարարի մամուլի խոսնակ Շուշան Ստեփանյանն ավելի վաղ հայտնել էր, որ հայկական ԶՈՒ ՀՕՊ ստորաբաժանումը խոցել է Ադրբեջանի ԶՈՒ կրակի կառավարման համակարգ հանդիսացող «Elbit Hermes 900» անօդաչու թռչող սարք: «Elbit Hermes 900»-ը հզոր անօդաչու թռչող սարք է, այն կրակի կառավարման համակարգ է հանդիսանում, հետախուզական ԱԹՍ է, շատ թանկարժեք է եւ Ադրբեջանի ամենամեծ ԱԹՍ-ն է:***

***ՀՀ զինված ուժերի կողմից նախօրդ օրերին եւս մի քանի ԱԹՍ-ներ էին խոցվել, որոնց լուսանկարներից երեւում էր, որ դրանք իսրայելական արտադրության են:***

***Հուլիսի 14-ին հակառակորդը հարվածային ԱԹՍ-ով թիրախավորել է Բերդ համայնքի քաղաքացիական ենթակառուցվածքները:***

### ՍԻԳԻ ՈՐՍԸ՝ ԽԻՍՏ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

***Հայաստանի շրջակա միջավայրի նախարարությունը իրականացնում է ծրագիր, որի շրջանակում փորձում է սիգ ձկնատեսակի փորձարարական որսի հնարավորություն: Իրականացվող գործընթացները միտված են Սեւանա լճում ձկան եւ խեցգետնի պաշարների կայուն օգտագործմանը եւ օգտագործման պայմանագրերի կնքման գործընթացի կանոնակարգմանը: Որսի ընդհանուր պահանջներից են՝ ձկան քաշը պետք է լինի 500 գրամից ոչ պակաս, սիգի արդյունագործական որսը պետք է իրականացվի դնովի ցանցերով (ցանցավանդակի կառուցողական քայլի չափը 40 մմ եւ ավելի):***

***Լողամիջոցների համար սահմանված են մուտքի եւ ելքի 17 տեղամասեր: Յուրաքանչյուր տեղամասում ազգային պարկի տեսուչը մասնակցությամբ է իրականացնելու հսկողական աշխատանքը:***

## ՀԱՅԱՍՏԱՆ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԵԿՈՂՆԵՐԸ ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ՀԱՄԱՐ ՄԱՔՍԱՎՃԱՐՆԵՐԻՑ ԱԶԱՏՎՈՒՄ ԵՆ

*Հայաստանի պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվությամբ, մշտական բնակության համար Հայաստան տեղափոխվող անձինք կարող են օգտվել անձնական օգտագործման ապրանքներն առանց մաքսային վճարների ներմուծելու հնարավորությունից:*

Այս արտոնությունը վերաբերում է միայն օգտագործված ապրանքներին: Ընդ որում, դրանք չպետք է գերազանցեն սահմանված չափաքանակը: Օրինակ՝ հնարավոր է տեղափոխել անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը՝ ավտոմեքենա, մոտոցիկլետ եւ դրանց կցորդներ՝ յուրաքանչյուրից մեկական: Կարող են իրենց հետ բերել օգտագործված կահույքը՝ յուրաքանչյուր տեսակից մեկ լրակազմ (ասենք՝ ննջասենյակի կահույքի բոլոր բաղկացուցիչները): Նաեւ՝ կենցաղային եւ անձնական օգտագործման սարքերը՝ սառնարան, հեռուստացույց եւ, ի դեպ, յուրաքանչյուր տեսակից 3 հատ: Իսկ անձնական գործածության իրերն ու օգտագործված տնային այլ գույքը՝ հագուստը, սպասքը, կարող են բերել առանց քանակային սահմանափակման:

Վերոնշյալ արտոնությունից օգտվելու համար նախ պետք է ստանալ ՀՀ մշտական բնակության տեղափոխման փաստի ճանաչումը հաստատող փաստաթուղթ՝ դիմում ներկայացնելով ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչություն: Փաստաթուղթը կտրամադրվի օտարերկրյա ֆիզիկական այն անձանց, ովքեր ունեն ՀՀ քաղաքացիություն, կամ ՀՀ հատուկ կամ մշտական (երկարաժամկետ) կացության կարգավիճակ կամ միջազգային պայմանագրով սահմանված դեպքում դրանց հավասարեցված այլ կարգավիճակ: Ըստ ՊԵԿ մաքսային վարչարարության եւ մաքսային գործի զարգացման բաժնի պետի՝ փաստաթղթի համար դիմելու օրվան նախորդող 1825 օր (մոտ 5 տարի) ժամանակահատվածում օտարերկրյա անձն առնվազն 915 օր (մոտ 2.5 տարի) պետք է բացակայած լինի Հայաստանից: Դիմողը, եթե բավարարում է այս պահանջները, ապա մշտական բնակության համար ՀՀ տեղափոխված անձ ճանաչող փաստաթուղթը նրան կտրամադրվի ոչ ուշ, քան աշխատանքային 5 օրվա ընթացքում:

Այս փաստաթուղթը ստանալուց հետո միայն անձը կարող է դիմում ներկայացնել մաքսային մարմիններին՝ թե' թղթային, թե' էլեկտրոնային եղանակով: Դիմումը պետք է ուղարկի ՊԵԿ-ի պաշտոնական հետեւյալ հասցեով՝ secretariat@petekamutner.am:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ



## ՀՈՒԼԻՍ

*28.07.2020 Աթանագինե եպիսկոպոսի եւ տասն աշակերտների նահատակության հիշատակության օր*

*30.07.2020 Սուրբ նախահայրերի՝ Ադամի, Աբելի, Սեթի, Ենովսի, Ենովքի, Նոյի, Մելքիսեդեկի, Աբրահամի, Իսահակի, Հակոբի, Հովսեփի, Մովսեսի, Ահարոնի, Եղիազարի, Հեսուի հիշատակության օր*

ՈԼՈՐՏ

## ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՊԱՐԿԸ ՀԱՄԱԼՐՎԵՑ 60 ՆՈՐ ՄԵՔԵՆԱՆԵՐՈՎ



*Վրաստանի արտակարգ իրավիճակների համակարգման եւ շտապ օգնության կենտրոնի ավտոպարկը թարմացվել է եւս մեկ անգամ:*

Հուլիսի 20-ին Թբիլիսիում, Առաջին Հանրապետության հրապարակում, առողջապահության նախարար Եկատերինե Տիկարաձեն, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեի եւ արտակարգ իրավիճակների համակարգման եւ շտապ օգնության կենտրոնի տնօրեն Ավթանդիլ Թալակվաձեն, անցկացրեցին շտապ օգնության ավտոպարկի նորացման շնորհանդեսը:

Առողջապահության նախարարությունը կենտրոնին փոխանցեց միջազգային չափանիշներին համապատասխան 60 մեքենա: Նրանցից 45-ը՝ շտապ օգնության ավտոմեքենաներ են, իսկ 15-ը՝ ռեանոմոբիլ, որը կիրառվելու է ծանր վիճակում գտնվող բուժառուներին մեկ բժշկական հաստատությունից մյուսը տեղափոխելու համար: Նշված ավտոմեքենաները կբաշխվեն Թբիլիսիում եւ շրջաններում՝ ըստ անհրաժեշտության:

## ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ԲՈԼՈՐԻՆ

*Շտապ բժշկական օգնություն* - 112
*Պարեկային ոստիկանություն* - 112
*Հրշեջ փրկարար ծառայություն* - 112
*Հրշեջ փրկարար օպերատիվ ծառայություն* - 01, 011, 275-20-85, 241-17-71
*Պահակային ոստիկանություն* - 125
*Գլխավոր տեսչություն* - 126
*Տեղեկատու բյուրո* - 118 08
*Քաղաքապետարանի թեժ գիծ* - 2-72-22-22
*Առողջապահության նախարարության թեժ գիծ* - 15-05
*ՂազՏրանսԳազ տեղեկատվական ծառայություն* - 114, 240-40-04
*Գազի վթարային ծառայություն* - 04, 274-86-27, 274-89-04
*ԹԵԼԱՍԻ թեժ գիծ* - 277-99-77, 227-45-81
*Ջրամատակարարման թեժ գիծ* - 293-11-11

ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ

## ՎԱՐԴՈՒՇԻ ԵԶԵԿՅԱՆ



Կարճ, բայց պատվով ապրած կյանքը Կյանքում ամենանխուսափելի մահն է, բայց այն ավելի ցավալի է, երբ կորցնում ես մերձավորիդ, երիտասարդ մերձավորիդ: Մահն իր ճիրաններից բաց չթողեց ընդամենը կյանքի 50 տարին բոլորած Վարդուշի Եզեկյանին, ով այնքան եռանդուն ու տոկուն անձնավորություն էր... Տիկին Վարդուշին ճաշակել էր կյանքի դժբախտությունները, դիմադրել ու հաղթահարել բազում դժվարություններ, կարճ ասած նա պատվով էր տանում իրեն բաժին հասած խաչը մինչեւ կյանքի անժամանակ մայրամուտ.... Ծնվել էր 1969 թվականին, Նինոծմինդայի շրջանի Ջիգրաշեն գյուղում, 1986 թվականին բարձր առաջադիմությամբ ավարտել տեղի միջնակարգ դպրոցն ու ընդունվել՝ Երեւանի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետը: Բուհն ավարտելուց հետո, 1993 թվականին աշխատանքի անցել եւ մինչեւ կյանքի վերջին օրերը աշխատել է Ջիգրաշենի հանրային դպրոցում որպես մաթեմատիկայի ուսուցչուհի՝ ավագ ուսուցչի որակավորմամբ: Տիկին Վարդուշին մի դուստր ուներ: Իր քրտնաջան ու անխոջ աշխատանքի շնորհիվ՝ կարողացավ միակ զավակին ապահովել բարեկեցիկ կյանքով, տվեց ուսումի, ամուսնացրեց... Ավաղ, չկարողացավ տեսնել իր երանելի առաջնեկ թոռնիկին: Տիկին Վարդուշուն ճանաչողները կհավաստեն, որ նա պայքարող տեսակ էր, բայց դաժան հիվանդության դեմ պայքարի համար նրա ուժերը չհերիքեցին: Տիկին Վարդուշին ծայրաստիճան հոգատար էր, հյուրասեր ու պատվախնդիր: Զարմանալ կարելի էր նրա կամքի ուժի վրա: Երբեք չէր հուսահատվում, լավատես էր... Առաջին հայացքից պարզ էր, բայց նրա պարզության մեջ այնքան խորիմաստություն կար: Տանել չէր կարողանում սուտն ու կեղծիքը, նախանձն ու չարությունը: Ու չնայած հիմա նա մեզ հետ չէ, բայց վստահ ենք, որ նրա բարի հոգին ապրում է երկնքի արքայությունում: Ասում են, Աստված իր մոտ արժանիներին է տանում, նա այդ արժանիներից էր: Տիկին Վարդուշու հիշատակը միշտ վառ կմնա նրա դստեր, ընտանիքի անդամների, տողերիս հեղինակի, նրա բարեկամների, աշխատակիցների ու աշակերտների սրտերում:

*ԱՐՄԵՆՈՒՀԻ ՊՈՂՈՍՅԱՆ*

## ԱՆԱՀԻՏ ԱԲԱՋՅԱՆ. ԵՐԲ ՈՂՋ ԿՅԱՆՔԸ ՔԻՉ Է



Անահիտ Աբաջյանը, ով Ախալքալաքիի JNEWS լրատվական կայքի հոդվածների հերոսուհիներից մեկն էր, մահացել է: Նրա երազանքը՝ Ախալքալաքիում սահմանափակ ֆիզիկական կարողություններ ունեցող անձանց համար միջավայրի մատչելիությունը, այդպես էլ չիրականացավ:

29 տարեկան հասակում կյանքից հեռացավ շատ դրական եւ լավատես մի մարդ: Ակտիվ Անահիտը զբաղվում էր լուսանկարչությամբ, մասնակցում էր գեղեցկության մրցույթներին եւ 2012-ին նվաճել էր Գեղեցկության թագուհու կոչումը: Նա շախմատ էր խաղում, մասնակցում էր մրցումների եւ պրոֆեսիոնալ խաղում էր պոկեր: Իր կամքի ուժով հնարավոր էր սարեր շրջել, բայց հիվանդությունը նրան թուլացրեց եւ անպաշտպան դարձրեց:

«Վրաստան» թերթի խմբագրությունը ցավակցում է Վարդուշի Եզեկյանի եւ Անահիտ Աբաջյանի վաղաժամ մահվան կապակցությամբ եւ վշտակցում նրանց հարազատներին, մերձավորներին ու բարեկամներին:

## Խ Ա Չ Բ Ա Ռ

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ■ | 1 | ■ | 2 | ■ | 3 | ■ | 4 | 5 | | 6 | | 7 |
| 8 | | | | | | | ■ | | ■ | | ■ | |
| ■ | | ■ | | ■ | | ■ | 9 | | | | | |
| 10 | | 11 | | 12 | | 13 | ■ | | ■ | | ■ | |
| ■ | 14 | | | | | | | ■ | 15 | | 16 | |
| ■ | ■ | | ■ | | ■ | | ■ | 17 | | | | |
| ■ | 18 | | 19 | | 20 | | 21 | ■ | | ■ | | ■ |
| 22 | | | | | | ■ | 23 | | | 24 | | 25 |
| ■ | | ■ | | ■ | | ■ | | ■ | 26 | | | |
| 27 | | 28 | | 29 | | 30 | | 31 | ■ | | ■ | |
| ■ | ■ | 32 | | | | | ■ | 33 | | | 34 | |
| ■ | ■ | | ■ | | ■ | | ■ | | ■ | 35 | | |
| 36 | 37 | | 38 | ■ | 39 | | 40 | | | ■ | | ■ |
| ■ | | ■ | 41 | | | | | | ■ | 42 | | 43 |
| 44 | | | | ■ | 45 | | | ■ | 46 | | | |
| ■ | | ■ | 47 | | | | | | ■ | 48 | | |
| 49 | | | | ■ | 50 | | | ■ | 51 | | | |

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 4.Ղազախստանի մայրաքաղաքը: 8.Չհամաձայնել, հերքել: 9.Գերմանացի փիլիսոփա ... ֆոն Բոլշտեդտ: 10.Բույսերի ու կենդանիների տեղական տեսակներ, որոնք տարածված են աշխարհագրական համեմատաբար ոչ մեծ տարածքում՝ մայրցամաքում, կղզիներում, լեռներում եւ ոչ մի այլ վայրում չեն հանդիպում: 14.Պայթուցիկ նյութ: 15.Վրացի մարզական լրագրող եւ մեկնաբան ... Օբոլաձե: 17.Պատահմունք, դեպք: 18.Որեւէ թեմային վերաբերող: 22.Քաղաքատիպ ավան Վրաստանի Խաշուրի շրջանում: 23.Դելֆինների տեսակ: 26.Թերեւս, երեւի: 27.Աբխազիայում արտադրած: 32.Ռուս մարմնամարզիկ, հասարակական եւ քաղաքական գործիչ ... Կաբաեւա: 33.Համայնք ՀՀ Շիրակի մարզում: 35.Ուկրաինայի մայրաքաղաքը: 36.... ցնդել, չքվել: 39.Սատուրնի արբանյակ, որը հայտնաբերվել է Ուիլիամ Հերշելի կողմից 1789 թվականին: 41.Հատուկ սահմանափակիչով սկյութական երկար դաշույն: 42.Վեհ, փառահեղ: 44.Հարավային Կորեայի մայրաքաղաքը: 45.Սնոտի, փուչ, դատարկ: 46.Մի շարք երկրներում դրամական միավոր: 47.Անուն չունեցող: 48.Երկրաչափական մարմին: 49.Մեղվինը՝ բուժիչ, օձինը՝ մահացու: 50.Առանց ճտքի, երեսը կիսով բաց կոշիկ: 51.Կարմրագորշ շերտ երկաթի մակերեսին, որ առաջանում է օքսիդանալուց:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Որեւէ բան անելու ներքին ձգտում: 2.Հունա-հռոմեական ոճի ըմբշամարտիկ ... Ջուլֆալակյան: 3.Ժողովրդական բժիշկ: 5.Զամբյուղ, կողով (գվռ.): 6.Փոքր եղբայր: 7.Աշխարհի եւ մարդկության արարիչը: 11.Գերմանացի երաժիշտ ... Բոլեն: 12.Ֆրանսիացի տիկին: 13.Ե՛վ Թռչուն, ե՛ւ «Չինական ակտինիդիա» (միրգ): 15.Էպիզոդ, կադր: 16.Կյանքը ռիսկի ենթարկած, ... կախված: 18.Հողաբլուր: 19.Թաջ-...: 20.Հայ Արշակունի թագավոր: 21.Թեոդոսիան հնում: 24.Գծանկարչական ստեղծագործություն, որ առանձնանում է կերպարների դյուրըմբռնելիությամբ եւ նախատեսված է զանգվածային տարածման համար: 25.Վերեւ (հակ.): 28.Հոգեկան տանջալից ապրում: 29.Խորհրդային ավտոմեքենա: 30.ՀՀ Տաշիր քաղաքի նախկին անվանումը: 31.Գրավոր ուղերձ: 34.Հռոմեացի քաղաքագետ եւ փիլիսոփա: 37.Քաղաք սեւ ծովի ափին (Ուկրաինա): 38.Աղցան: 39.Հայ բանաստեղծ, Ֆրանսիայի ազգային հերոս ... Մանուշյան: 40.Արցախի պետական համալսարանի ռեկտոր ... Մինասյան: 42.Իտալացի կինոռեժիսոր եւ կինոդերասան Վիտորիո դե ...: 43.Մարդու գլխի կմախքը:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Շառլոթա: 5. աբկանք: 8.Տաբատ: 9.Դորպատ: 11.Արդ: 12.Կոն: 14.Անթաղ: 16.Հաագա: 18.Սա: 19.Վարար: 20.Դիետա: 22.Նկարա: 23.Տրե: 24.Այգ: 26.Նինվե: 27.Աշնակ: 29.Լաց: 31.Երե: 32.Յակ: 34.Բոր: 37.Ասֆալտ: 39.Որ: 40.Թաս: 41.Ինն: 42.Աներորդի: 43.Ռենի: 44.Դա: 45.Սոս: 47.Տոնական: 51.Րե: 53.Վանո: 54.Ամպեր: 55.Գայ: 56.Լանա: 58.Նենե: 59.Իլիկ: 50.Պատվել:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Շոտլանդիա: 2.Ռաբաթ: 3.Որտեղ: 4.Արդահան: 5. արդավանք: 6.Բնակարան: 7.Նատո: 10.Որա: 12.Կերտել: 13.Նովենց: 15.Արտաշես: 17.Գարի: 21.Այն: 25.Գայանե: 27.Աթանես: 28.Կալենց: 30.Ադամյան: 33.Կտրի: 34.Բորդո: 35.Որդան: 36.Ճիաուրելի: 38.Ֆարս: 46.Ոհմակ: 47.Տաթեւ: 48.Ավան: 49.Կայեն: 50.Նոյեմ: 52.Ծերպ: 54.Անի: 57.Ալ:

Խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439 «ԿՈԼՈՐ» հրատարակչություն
"ВРАСТАН" Тбилиси, Грузия <VRASTAN> Georgia, Tbilisi Индекс 66445